ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 1-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 18-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհուրդը **որոշում է՝**

1. Հրավիրել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) արտահերթ նիստ՝ 2023 թվականի փետրվարի 1-ին, ժամը՝ 17^{00}-ին:

2. Կառավարման խորհրդի նիստի օրակարգը Կառավարման խորհրդի անդամներին տրամադրելու ապահովումը հանձնարարել Կառավարման խորհրդի քարտուղարին:

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169